



UI OnlineSM

Գրանցվե՛ք UI OnlineSM-ում այսօր և հաստատեք գործազրկության ապահովագրության (UI) նպաստներ ստանալու Ձեր իրավունակությունը:

Դա նույնքան հեշտ է, որքան 1, 2, 3-ը:



Այցելեք UI OnlineSM-ի հիմնաէջը՝ www.edd.ca.gov/UI_Online



Օգտագործեք Ձեր Զբաղվածության զարգացման վարչության (EDD) Հաճախորդի հաշվեհամարը, սոցիալական ապահովության քարտի համարը (SSN), ծննդյան թվականը և անձնական էլեկտրոնային փոստի հասցեն, որպեսզի գրանցվեք UI OnlineSM հաշվի համար:



Մուտք գործեք համակարգ և սկսեք օգտագործել UI OnlineSM կամ UI Online MobileSM՝ նպաստների համար իրավունակությունը հաստատելու և այլ առավելություններից օգտվելու համար:

UI OnlineSM

Արագ, հարմար և ապահով միջոց՝ մուտք գործելու դեպի հայցի և վճարման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, հաստատելու նպաստների համար իրավունակությունը և առցանց կառավարելու Ձեր UI հայցը 24/7 ռեժիմով:

Ինչու՞ գրանցվել UI OnlineSM-ում:

- UI հայցի վերաբերյալ կարևոր տեղեկատվությունը հասանելի է 24/7 ռեժիմով: Մուտք գործեք դեպի Ձեր հայցի վերաբերյալ տեղեկությունները ցանկացած տեղից համակարգչի, սմարթֆոնի կամ պլանշետի միջոցով:
- Նպաստների համար իրավունակության հաստատումները մշակվում են ավելի արագ: Միջին հաշվով, UI OnlineSM համակարգի միջոցով ներկայացված հաստատումներն ավելի արագ են մշակվում, քան թղթային ձևաչափով կամ հեռախոսով ներկայացվածները:
- Հայցվորներն ավելի քիչ ստուգողական զանգեր են ստանում EDD-ից: UI OnlineSM համակարգից օգտվելու դեպքում պարզաբանող տեղեկատվությունը ստացվում է կանխավ՝ նվազագույնի հասցնելով ստուգողական զանգերի անհրաժեշտությունը:
- Անձնական տեղեկությունների թարմացումը կատարվում է արագ և հեշտ: Փոստային հասցե, հեռախոսահամար և այլ տեղեկություններ թարմացնելը պարզ է և ապահով:
- Դիտեք բոլոր նշանակված տեսակցությունները և փոխեք հեռախոսային հարցազրույցների նշանակումները:
- Խնայեք փոստային ծախսերի համար օգտագործվող փողը և նվազեցրեք օգտվողների կողմից սովորաբար կատարվող սխալները, որոնք կարող են հետաձգել նպաստների վճարումները:



www.edd.ca.gov/UI_Online

Լրացուցիչ տեղեկություններ UI OnlineSM համակարգի մասին

Ուզում եմ ավելին իմանալ UI OnlineSM-ի մասին:

UI OnlineSM համակարգը մաս է կազմում EDD-ի՝ արդյունավետության բարելավմանը, UI ծառայություններից օգտվելու հնարավորությունների ավելացմանը և գործազուրկներին տրվող նպաստների վճարումների արագացմանն ուղղված շարունակական ջանքերի: UI OnlineSM-ի միջոցով կկարողանաք առօրյա գործերով զբաղվել ձեր սեփական տան հարմարավետ պայմաններում՝ առանց ստիպված լինելու սպասել ներկայանալու մասին ծանուցող նամակին կամ խոսելու EDD-ի ներկայացուցչի հետ:

Որպես հավելյալ հարմարավետություն՝ UI Online MobileSM ծառայություն է տրամադրվում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին:

UI OnlineSM-ով ավելի հեշտ է՝

- հաստատել իրավունակությունը շարունակական նպաստների համար և զեկուցել աշխատանքի ու աշխատավարձերի մասին.*
- ստանալ վճարման և հայցի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ.
- վերաբացել ընթացիկ հայցը UI նպաստների վճարումները վերսկսելու նպատակով՝ առանց ներկայացուցչի հետ խոսելու.*
- արագորեն և հեշտությամբ առցանց թարմացնել կոնտակտային տվյալները, օրինակ՝ Ձեր հեռախոսահամարը և հասցեն:

**Մասնակի կամ Աշխատանքի բաշխման ծրագրերին մասնակցող հայցվորներն այս անգամ չեն կարող հաստատել իրենց իրավունակությունը նպաստների համար կամ UI OnlineSM-ի միջոցով վերաբացել ընթացիկ հայցը, բայց կարող են օգտվել համակարգի բոլոր մյուս գործառնական հնարավորություններից:*

Նաև կարող եք UI OnlineSM-ում Ձեր հիմնաէջից ստանալ հայցի արագ ամփոփագիրը.

- ստացեք կարևոր ծանուցումներ, օրինակ՝ այն մասին, թե երբ է նպաստների համար իրավունակությունը հաստատելու կամ Ձեր հայցը վերաբացելու ժամանակը.
- դիտեք բոլոր նշանակված տեսակցությունները և փոխեք հեռախոսային հարցազրույցի օրն ավելի ուշ թվականով.
- տեսեք հայցի ամփոփագիրը, ներառյալ վերջին կատարված վճարումը, մնացորդային հաշվեկշիռը, շաբաթական նպաստի գումարը և աշխատանքի որոնման վերաբերյալ պահանջները:

Ի՞նչ է EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:

EDD-ն շատ լրջորեն է վերաբերվում գաղտնի տեղեկությունների անվտանգության հարցին և անընդհատ փնտրում է հաճախորդների անձնական տեղեկությունների հավելյալ պաշտպանության միջոցներ: Ի հավելումն խարդախության կանխման և հայտնաբերման նպատակով EDD-ի համակարգերում ներկառուցված նախազգուշական միջոցներին՝ EDD-ն իրականացրել է EDD-ի Հաճախորդի հաշվեհամարի կիրառումը:

Այս համարը կարելի է օգտագործել որպես այլընտրանքային նույնականացման համար, երբ գործ եք ունենում EDD-ի հետ, բայց այս անգամ չի փոխարինի սոցիալական ապահովության համարին (SSN): Դա նաև պահանջվում է UI OnlineSM-ում գրանցվելու համար: Հիշեք, երբեք որևէ մեկին մի հայտնեք Ձեր անձնական տեղեկությունները, ներառյալ EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:

Իսկ եթե ես արդեն SDI-ի Առցանց հաշիվ ունեմ հաշմանդամության ապահովագրության (Disability Insurance) կամ վճարովի ընտանեկան արձակուրդի (Paid Family Leave) հայցի ց:

Դուք պետք է UI OnlineSM-ում գրանցվելու համար օգտագործեք Ձեր SDI-ի Առցանց հաշիվի օգտանունը և գաղտնաբառը: UI OnlineSM-ում գրանցվելիս ընտրեք «Գրանցվել SDI մուտքի տվյալներով» (“Register Using SDI Login”) կոճակը՝ գրանցման գործընթացն արագացնելու համար:

Գրանցվեք այսօր և օգտվեք UI OnlineSM-ի բազմաթիվ առավելություններից ու հարմարություններից:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին:

www.edd.ca.gov/UI_Online